# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՀՆ Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 7 | ՀՆ Գրուպ ՍՊԸ | Բաճկոնը պետք է լինի «Սարժա» տեսակի մոխրագույն ջրադիմացկուն գործվածքից: Բաճկոնը պետք է կարված լինի երկերանգ (մուգ և բաց)՝ պարանոցի հետին մասը, թիկունքի և թևատակերի հատվածները լինեն մուգ գույնի, իսկ մնացած մասը բաց գույնի նույն տեսակի գործվածքից: Բաճկոնը պետք է լինի աստառով և սինտեպոնե ներդիրով՝ ջերմություն ապահովելու համար: Բաճկոնը բաղկացած է մեջքից, մինչև պարանոց բարձրացված օձիքից, թևքերից և լանջափեշերից, որոնք միացվում են շղթայով: Բաճկոնը գոտկատեղից վերև պետք է ունենա կողային երկու գրպաններ: Բաճկոնի կրծքավանդակի ձախ մասում պետք է լինի գրպանի իմիտացիա, այսինքն՝ «լեզվակ», որի վրա կրելու ժամանակ կամրացվի միասնական նմուշի անվանական կրծքանշանը: Բաճկոնի օձիքը հետևի մասում պետք է ունենա շղթայով թաքնված գլխանոց: Բաճկոնի թևերի կողային հատվածում մուգ գույնի կտորով կարված լինի գրպանի իմիտացիա: Բաճկոնի երկարությունը գոտկատեղից ներքև, թևերը մանժետներով՝ որոնք կարգավորվում են կպչուն ժապավենով, իսկ բաճկոնի ստորին հատվածը երկու կողմից ունենա թելերով կարգավորվելու հնարավորություն: Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա հանդերձանքի նմուշը: Հանդերձանքի նմուշը համաձայնեցնելուց |

| | | |
|---|---|---|
| | | հետո Գնորդի կողմից Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը: Փաթեթավորումը` հակերով, հակերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Հակերը պիտակավորված: Պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն` Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ""ХН ГРУП"" в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 7 | ООО ""ХН ГРУП"" | Куртка должна быть сшита из серой водонепроницаемой ткани типа «Саржа». Куртка должна быть пошита в двух цветах (темном и светлом): задняя часть горловины, спинка и подмышечные области должны быть темными, а остальная часть куртки должна быть сшита из того же типа ткани светлого цвета. Куртка должна быть на подкладке и иметь синтепоновую вставку для обеспечения тепла. Куртка состоит из спинки, воротника, поднятого к шее, рукавов и боковых полотнищ, которые соединяются цепочкой. Куртка должна иметь два боковых кармана выше талии. На левой стороне груди куртки должна быть имитация кармана, то есть «хлястик», на который будет крепиться значок образца формы при ношении. Воротник куртки должен иметь потайную шлевку сзади с цепочкой. Боковая часть рукавов куртки должна иметь имитацию кармана, пришитую из темной ткани. Длина куртки должна быть ниже талии, рукава с манжетами, регулируемыми липкой лентой, а низ куртки должен иметь возможность регулировки нитками с обеих сторон. Перед поставкой товара Продавец обязан по запросу Покупателя предоставить образец поставляемой куртки для согласования. После согласования образца куртки Покупатель предоставляет Продавцу размеры куртки. Упаковка: в пакетах по 5 шт., ассортимент – в |

| | | |
|---|---|---|
| | | прозрачных полиэтиленовых пакетах. Пакеты маркируются. На этикетках должны быть указаны наименование ассортимента, количество, размеры, наименование организации-производителя, месяц и год изготовления. Организация-поставщик обязана за свой счет предоставить заключение лицензированной, аккредитованной экспертной лаборатории Республики Армения о соответствии товара техническим условиям, установленным в Договоре. |